



# Amasia Wool Factory

Ամասիայի բրդի  
գործարան

Կատալոգ  
2020-2021



ԱՄԱՍԻԱ, ՇԻՐԱԿ, ՀԱՅԱՍՏԱՆ

# ՄԵՐ ՄԱՍԻՆ

## Մեր արժեքները Ի՞նչ ենք մենք անում

Ամասիայի բրդի գործարանը հիմնադրվել է 2019 թ-ն: Գործարանն իր տեսակով Հայաստանում գործող միջինից մեծ քանակությամբ բուրդ մշակող եզակի արտադրամաս է: Մենք հումքը ձեռք ենք բերում Շիրակի մարզի ֆերմերներից և տեղական ու միջազգային շուկայի համար արտադրում մաքուր հայկական բուրդ: Մենք համատեղում ենք բրդի գզման ժամանակակից տեխնոլոգիաներն ու ձեռագործ արհեստը և մեր հաճախորդներին առաջարկում բնական բրդյա արտադրանք՝ շերտավոր և ժապավենային գզված բրդից մինչև բնական թելեր ու գործվածք: Մեծ ուշադրություն է դարձվում շրջակա միջավայրի պաշտպանությանը. այդ իսկ նպատակով բուրդը լվացվում է էկոօճառներով, իսկ մանվածքները ներկվում են միայն բնական նյութերով: Կատալոգում ներկայացված է մեր գործարանի արտադրական ներուժը, սակայն մենք ջանք չենք խնայի հաճախորդների պահանջներն համապատասխան հատուկ առաջարկների ձևավորման համար:





# ՄԵՐ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԼՎԱՑՎԱԾ ԲՈՒՐԴԸ

**Ամսական մինչև 1 տոննա  
4 բնական երանգ**



Մեր լվացված բուրդը իր մեջ կրում է Ամասիայի բնության՝ քարացած լավայի և խոտածածկ դաշտերի ջերմությունը:

Ամասիայի բրդի գործարանում ամսական լվացվում է կես տոննա բուրդ: Անհրաժեշտության դեպքում գործարանն ունի մինչև մեկ տոննա բրդի լվացման արտադրական հնարավորություն:

Գործարանում բուրդը մանրակրկիտ կերպով մաքրվում և լվացվում է Ամասիայի մաքուր և փափուկ ջրով՝ կենսաբաշխելի մաքրող միջոցների օգտագործմամբ: Լվացման այս եղանակը պահպանում է ոչ միայն բրդի բարձր որակը, այլ նաև շրջակա միջավայրը: Մենք առաջարկում ենք չորս բնական երանգ՝ սպիտակից մինչև բաց դարչնագույն և մուգ շագանակագույն: Հաճախորդների պահանջներից ելնելով՝ գույների խառնուրդներից կարող ենք ստանալ ավելի շատ բնական երանգներ:

**Փաթեթավորումը՝ առանց փաթեթավորման կամ 10 կգ քաշով՝ բազմակի օգտագործման տոպրակների մեջ**  
**Կիրառությունը՝ ներքնակներ, վերմակներ, բարձեր, ծածկոցներ, մեկուսիչ նյութ**

## ՄԵՐ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԳԶԱԾ ԲՈՒՐԴԸ

Օգտագործելով բրդի գզման ժամանակակից տեխնոլոգիաներ՝ մենք ստանում ենք չորս բնական երանգների գզած բուրդ: Առաջարկվող երանգավորումն է՝ սպիտակից մինչև փայտի, բաց դարչնագույնից՝ մուգ շագանակագույն: Հաճախորդների պահանջներից ելնելով՝ կարող ենք ստանալ բնական ավելի շատ երանգներ:





## ՇԵՐՏԱՎՈՐ ԳԶԱԾ ԲՈՒՐԴ

Մեր գործարանում արտադրում ենք շերտավոր գզած բուրդ: Ըստ անհրաժեշտության՝ գզած բրդի հաստությունը կարող է փոփոխվել 2-ից՝ 17 սմ: Ստանդարտ չափսը՝ 100x220 սմ է:

**Փաթեթավորումը՝ տոպրակ  
Կիրառությունը՝ թաղիքագործություն, ներքնակներ, վերմակներ**



## ԳԶԱԾ ԲՐԴԻՑ ԺԱՊԱՎԵՆՆԵՐ

Նախքան բրդի գզումը, մենք մանրաթելը մշակում ենք հատուկ անտիստատիկով, որպեսզի հաճախորդին բացառիկ արտադրանք առաջարկենք: Էլեկտրական գզման մեր մեքենան հնարավորություն է տալիս ստանալ այն ճշգրիտ հաստության ժապավենը, որը մեր հաճախորդն է ցանկանում:

**Փաթեթավորումը՝ 10 կգ տոպրակներ  
Կիրառումը՝ մեխանիկական և ավտոմատ եղանակով թելի մանում,  
վերմակներ, ծածկոցներ, այլ ձեռագործ աշխատանքներ**



## ՄԵՐ ԲՆԱԿԱՆ ԹԵԼԵՐԸ

Կանանց ձեռքով և կիսաավտոմատ ճախարակներով մանված թելերը փոխանցում են ձեռագործ աշխատանքի յուրօրինակ ջերմությունը: Այն գորգագործության հայկական ավանդույթների պահպանման ջատագովների բնական ընտրությունն է:



# ՄԵՐ ԹԵԼԵՐՆ ԱՐՏԱՑՈՒՈՒՄ ԵՆ ԱՄԱՍԻԱՅԻ ԲՆԱԿԱՆ ԵՐԱՆԳՆԵՐԸ



Թելերի բնական երանգները չորսն են՝ սպիտակ, փայտի, դարչնագույն, մուգ շագանակագույն: Մենք պատրաստ ենք ստանալ բնական այլ գույներ ու տարբերվող երանգներ՝ ըստ հաճախորդների պահանջարկի:

Մենք արտադրում ենք միաշերտ, երկշերտ և եռաշերտ թույլ փաթաթաններ և կծիկներ: Թելերի ոլորքը և համարը համապատասխանեցնում ենք հաճախորդների պահանջներին: Արտադրում ենք 3-8 համարների, թույլ, ամուր և միջին ոլորքի թելեր:

**Փաթեթավորումը՝ թույլ փաթաթաններ և կծիկներ  
Կիրառությունը՝ գորգագործություն, կարպետագործություն,  
գործվածքներ, ասեղնագործություն, շյուղագործություն**



# ԲՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ ՆԵՐԿՎԱԾ ՄԵՐ ԹԵԼԵՐԸ

Ինդիգո, տորոն, որդան կարմիր, ամարանտ...

Մենք օգտագործում ենք բացառապես բնական գունանյութեր և գույնի ամրացման ու երկարակեցության հատուկ տեխնիկաներ:

Մենք արտադրում ենք միաշերտ, երկշերտ և եռաշերտ թույլ փաթաթաններ և կծիկներ: Թելերի ոլորքը և համարը համապատասխանեցնում ենք հաճախորդների պահանջներին: Արտադրում ենք 3-8 համարների, թույլ, ուժեղ և միջին ոլորքի թելեր:



**Փաթեթավորումը՝ թույլ փաթաթաններ և կծիկներ  
Կիրառումը՝ գորգագործություն, կարպետագործություն,  
գործվածքներ, ասեղնագործություն, շյուղագործություն**



## ՄԵՐ ԶԵՌԱԳՈՐԾ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԸ



Մեր գործվածքները հյուսվում են բացառապես բրդյա բնական թելերից, իսկ որպես հենք օգտագործվում է միայն բամբակը: Մեր ջուլհակներն աշխատում են Եվրոպայից ներմուծված Glimakra դազգահների վրա: Բնական գույների և ներկանյութերի մեր ընտրության, նախշերի բազմազանության, ութձողանի դազգահների շնորհիվ՝ մենք մեր հաճախորդներին առաջարկում ենք Հայաստանում արտադրված գործվածքի լայն տեսականի: Ապրանքի ձևավորման ընթացքում անհատական մոտեցում ենք ցուցաբերում մեր բոլոր հաճախորդներին և հարգում գաղտնիության ու դիզայնի անկրկնելիության նրանց իրավունքը:

**Տեխնիկական ներուժը՝ գործվածքի լայնությունը մինչև 110սմ, երկարությունը՝ մինչև 8մ**

**Կիրառումը՝ տան ներքին ձևավորում, հագուստ, աքսեսուարներ, կահույքի դիզայն**



Ամասիայի բրդի գործարանն ստեղծվել է Եվրոպական միության, ՀՀ Կառավարության և «Մարդը կարիքի մեջ» չեխական ՀԿ-ի համաֆինանսավորմամբ՝ «ԵՄ-ն Շիրակի մարզի համար. նոր աշխատատեղեր՝ շնորհիվ բրդի արտադրության» ծրագրի շրջանակում:

Այն ուղղված է Շիրակի մարզում բրդի արժեչղթայի զարգացմանն ու մոդերնիզացիային, ստեղծելով նաև ոչխարաբուծությունից մինչև բրդյա թելի և ապրանքների արտադրության առաջխաղացման հնարավորություն: Ծրագիրը նպաստում է Շիրակի մարզում աշխատատեղերի ստեղծմանը և փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) զարգացմանը՝ խթանելով բնակչության՝ մասնավորապես կանանց զբաղվածության և ՓՄՁ-ների տնտեսական մրցունակության բարձրացմանը:

Ծրագրի իրականացման գործընկերներն են Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամը, Շիրակի մարզի առևտրաարդյունաբերական պալատը և Ամասիայի համայնքապետարանը:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:





**Amasia  
Wool Factory**

Ամասիայի բրդի  
գործարան

Էլ. հասցե՝ [Amasiawoolfactory@gmail.com](mailto:Amasiawoolfactory@gmail.com)  
Facebook: AmasiaWoolFactory